ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№

«____»_____2022թ

«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
(հասցե՝ ք.Երևան,Հր. Քոչարի 15
Էլ. փոստ eic-tender@mail.ru)

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և **«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17.01.2022 թվականին կնքված **«ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/111-3»** ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 3-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքները և վճարել դրա համար»:

Սակայն Ընկերության կողմից իրականացվել է շուկայի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզ է դարձել, որ 3-րդ չափաբաժնով նախատեսված (հեռահաղորդակցման սարքեր՝ Wifi հասանելիության կետ Unifi UAP-AC-LR կամ համարժեք սարքավորում, որը կարող է աշխատել Unifi Controller համակարգի հետ Ubiquiti Unifi UAP-AC-LR, 10 հատ) ապրանքի ձեռքբերումն անհնար է, քանի որ տվյալ տեսակի ապրանքն այլևս չի արտադրվում:

Հիմք ընդունելով վերոհիշյալը և առաջնորդվելով Պայմանագրի 2.1.7 կետով՝ Պատվիրատուն 3-րդ չափաբաժնով Պայմանագիրը միակողմանի լուծում է, քանի որ Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Ղեկավարվելով վերոհիշյալ իրավական հիմքերով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հրաժարվում է «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի հետ 3-րդ չափաբաժնով կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված 570 000 ՀՀ դրամ գումարի չափով, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-

Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 85 500 ՀՀ դրամ և 57 000 ՀՀ դրամ ՀՀ էկոնոմիկայի նախարարության 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝

ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

X _____

(պարտականությունները կատարող)

Կատարող՝
Տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովման և
հրապարակումների բաժնի գլխավոր մասնագետ, Աննա Ղարիբջանյան
011597535